ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 14/22

01.10.2022թ. ք. Երևան

Քաղաքացի Ռուզաննա Ղազարյանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրության 1-ին, 3-րդ, 10-րդ, 60-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին և 78-րդ հոդվածին:

Դիմողի համար վերոնշյալ դրույթի վիճարկման հիմք է հանդիսացել այն փաստը, որ օրենսդիրը ծանուցման փոստային առաքման անդորրագրի (անկախ հասցեատիրոջը հանձնված լինելու հանգամանքին) առկայությունը անձի սեփականության իրավունքի դադարեցման պետական գրանցման իրականացման բավարար հիմք է համարում: Նման կարգավորմամբ, ըստ էության, հնարավոր չէ երաշխավորել սեփականության իրավունքի արդյունավետ պաշտպանությունը: Ըստ Դիմողի՝ օրենսդիրը չի նախատեսել այնպիսի ընթացակարգ, որը հնարավորություն կտար հավաստիանալու նշված ծանուցումը գրավատուի կողմից ստացվելու մասին, ինչպես նաև՝ նախատեսված չեն ծանուցումը գրավատուի կողմից չստանալու պարագայում ծանուցման այլ ընթացակարգեր, որի պարագայում գրավատուն հնարավորություն կունենար իրականացնելու իր իրավունքների պաշտպանությունը:

Ըստ Դիմողի՝ եթե օրենքի նման կարգավորման հիմնական նպատակը անբարեխիղճ գրավատուների կողմից բռնագանձման ծանուցումը ստանալուց խուսափելու հանգամանքի դեմ «պայքարելն է», ապա տվյալ դեպքում օրենսդիրը զրկված

չէ սահմանելու բռնագանձումը չստանալու պարագայում դրա այլընտրանքային իրավակարգավորումներ։

Խնդիրն այն է, որ բռագանձման ծանուցումը գրավատուին ուղարկված լինելը հավաստող փոստային անդորրագրի ձևակերպման բովանդակային ծավալում այն ստանալու կամ ընթացակարգային այլ եղանակով առնվազն հասու դարձնելու պայման չնախատեսելու արդյունքում գրավատուն կարող է զրկվել ոչ միայն գրավադրված գույքի բռնագանձումը և դրա իրացումը դադարեցնելու իր իրավունքից՝ կատարելով գրավով ապահովված պարտավորությունը կամ դրա այն մասը, որի կատարումը կետանցվել է, այլ նաև՝ բռնագանձման օրինականությունը վիճարկելու իրավունքից։

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 40-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրության 1-ին, 3-րդ, 10-րդ, 60-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին և 78-րդ հոդվածին։

Վիճարկվող դրույթի՝ Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունը հետևյալն է.

«2. Սույն հոդվածի իմաստով բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ է համարվում ծանուցման փոստային առաքման անդորրագիրը կամ ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ տրված ստացականը, այդ թվում՝ գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշումը։»։

Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է։*

Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է։ Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է։

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են։

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Այսպես, Դիմողի համար վերոնշյալ դրույթի վիճարկման հիմք է հանդիսացել այն փաստը, որ օրենսդիրը ծանուցման փոստային առաքման անդորրագրի (անկախ հասցեատիրոջը հանձնված լինելու հանգամանքին) առկայությունը անձի

սեփականության իրավունքի դադարեցման պետական գրանցման իրականացման բավարար հիմք է համարում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) կարգավորվում են գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելու հիմքերը և կարգը: Համաձայն Օրենսգրքի 248-րդ հոդվածի՝ գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարելու համար գրավ դրված գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու այնպիսի հանգամանքներում, որոնց համար վերջինս պատասխանատվություն է կրում:

1. Գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն, այդ թվում՝ գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, եթե՝

1) դա նախատեսված է գրավի պայմանագրով, կամ՝

2) առկա է գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնություն, իսկ եթե գրավի պայմանագիր կնքելու համար պահանջվել է երրորդ անձի համաձայնություն կամ թույլտվություն, ապա նաև վերջինիս գրավոր համաձայնությունը՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին (Օրենսգրքի 249-րդ հոդված):

Օրենքով նախատեսված դեպքերում գրավառուի կողմից հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման համար վերջինս պետք է Օրենքով նախատեսված փաստաթղթերը՝ այդ թվում բռնագանձման ծանուցումը, ներկայացնի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնող մարմին:

Ըստ վիճարկվող նորմի, բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ է համարվում

1. ծանուցման փոստային առաքման անդորրագիրը կամ

2. ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ տրված ստացականը, այդ թվում՝ գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշումը:

Այսինքն՝ օրենսդիրը նախատեսել է բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու փաստը հաստատող երկու դեպք, որից՝

– առաջին դեպքում բավարար է միայն ծանուցման փոստային առաքման անդորրագիրը՝ առանց փոստային առաքման անդորրագրի հետադարձ անդորրագրի, այսինքն՝ անկախ գրավատուի կողմից ծանուցագրի ստացման փաստը հաստատող ապացույցի.

– երկրորդ դեպքում՝ պատշաճ ծանուցում է համարվում ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ տրված ստացականը, այդ թվում՝ գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշումը։

Ստացվում է, որ գրավառուի կողմից հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման համար մի դեպքում օրենսդիրը պարտադիր պայման է համարում գրավատուի կողմից բռնագանձման ծանուցագրի ստացման փաստը, մյուս դեպքում՝ բավարար է միայն համապատասխան ծանուցագիրը գրավատուին փոստային առաքմամբ ուղարկելը՝ անկախ գրավատուի կողմից այն ստացված լինելու հանգամանքից։

Հայաստանի Հանրապետությունը, իրեն հռչակելով իրավական պետություն, Սահմանադրության մեջ ամրագել է, որ մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է։ Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք (Սահմանադրության 3-րդ հոդված):

Սեփականության իրավունքը ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային հիմնարար փաստաթղթերով երաշխավորված մարդու հիմնական իրավունքներից է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ կոնվենցիոն նորմի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (տե՛ս, օրինակ, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով 2009թ. հունիսի 11-ի վճիռը, կետ 44): ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածն ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են

սեփականության բոլոր ձևերը, իսկ 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Հայաստանի Հանրապետությունում սեփականության իրավունքը ճանաչված և պաշտպանված է սահմանադրորեն. Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:*

Սակայն նույն հոդվածի 3-րդ մասում նշված է՝ *սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:*

Այսինքն՝ սեփականության իրավունքը, որքան էլ, որ սահմանադրորեն երաշխավորված իրավունք լինի, միևնույնն է բացարձակ իրավունք չէ և օրենքով նախատեսված դեպքերում այն կարող է սահմանափակվել: Նշված հարցին անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումների շրջանակներում:

2011 թվականի հունիսի 21-ի ՍԴՈ-980 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշում է. «5. …. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11–րդ հոդվածը վերաբերում է քաղաքացիական իրավունքները սեփական հայեցողությամբ իրականացնելու իրավական հնարավորությանը: Այս կապակցությամբ, հաշվի առնելով այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության, հասարակական հարաբերությունների կայունության ապահովման անհրաժեշտությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավունքների իրականացման հայեցողությունը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ խաթարվի այլոց իրավունքների և ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի էությունը, վտանգի տակ դրվի հասարակական հարաբերությունների կայունությունը: Հետևաբար՝ իրավունքների իրականացման հայեցողությունը չի ենթադրում իրավունքների չկարգավորված, անկանոն իրականացում: Այն ենթադրում է տվյալ իրավունքն իրականացնելու կամ չիրականացնելու իրավական հնարավորությունների միջև ընտրություն կատարելու իրավունք, որի իրականացումը կարող է տեղի ունենալ բացառապես օրենքով սահմանված կարգի շրջանակներում: Ընդհակառակը, իրավունքների՝ օրենքով սահմանված կարգից դուրս ցանկացած իրականացման

հնարավորություն կխաթարի այլոց իրավունքների և ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի էությունը՝ միաժամանակ վտանգի տակ դնելով հասարակական հարաբերությունների կայունությունը։»։

Միաժամանակ, անդրադառնալով մարդու իրավունքների սահմանափակման հնարավորությանը, Սահմանադրական դատարանը 2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ–649 որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «… Սահմանադրորեն նախատեսված սահմանափակման ենթակա իրավունքների առնչությամբ, համաձայն մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չզրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը)։»։

Սահմանադրական դատարանը, 2007 թվականի փետրվարի 7-ի ՍԴՈ–677 որոշման մեջ անդրադառնալով համաչափության սկզբունքին, արձանագրել է հետևյալը. «Սահմանադրության 43 հոդվածի 1–ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար։»։

Վերոգրյալի վերլուծությունից ստացվում է, որ Օրենքով նախատեսվում է միջամտություն անձի սեփականության իրավունքին, ընդ որում, այնպիսի միջամտություն, որը խնդրահարույց է ընտրված միջոցների համաչափության տեսանկյունից։

Գրավ դրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու մեխանիզմն ուղղված է գրավառուի իրավունքների պաշտպանությանը գրավատուի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում։ Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ նման գործընթացի արդյունքում գրավատուի սեփականության իավունքը դադարեցվում է գրավադրված գույքի նկատմամբ, անհրաժեշտ է համաչափ կարգավորումներ նախատեսել, որպիսի պարագայում

կերաշխավորվի նաև գրավատուի սեփականության իրավունքը: Եթե դիտարկենք այն հանգամանքը, որ գրավատուն հնարավոր է միտումնավոր չստանա բռնագանձման ծանուցագիրը և այդ կերպ խուսափի գրավի առարկան գրավառուի սեփականությանն անցնելու գործընթացից, ապա նման դեպքերի համար հնարավոր է այլընտրանքային լուծումներ մշակել, ինչպիսին օրինակ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-ին հոդվածով նախատեսված կարգավորումներն են:

Որպես իրավունքի գերակայության, իրավական պետության կայացման ու զարգացման անհրաժեշտ նախապայման՝ պետության պարտականությունն է երաշխավորելու անձանց իրավունքների և ազատությունների համալիր իրացումը: Իրավակարգավորման ձևերի ու միջոցների ընտրությունը, դրանցով անձանց իրավունքների գործադրման առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ հետապնդելը չեն կարող իրացվել ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման: Ուստի, անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որոնք անհարկի չեն սահմանափակի անձանց՝ սահմանադրորեն երաշխավորված իրավունքները, չեն ստեղծի անպիսի իրավիճակներ, որոնք յուրաքանչյուր անգամ կստիպեն անձին դիմել դատարան՝ իր խախտված իրավունքների վերականգնման նպատակով: Ավելին, գործող կարգավորման պայմաններում, փաստորեն անձը, հնարավոր է՝ տեղյակ էլ չլինի իր սեփականության իրավունքի դադարեցման վերաբերյալ՝ բռնագանձման ծանուցումը ստացած չլինելու պատճառով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրության 1-ին, 3-րդ, 10-րդ, 60-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին և 78-րդ հոդվածին խնդրահարույց են:

Recoverable Signature

Համակարգող՝ X Lyudvik Davtyan *Լյուդվիկ Դավթյան*

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169